# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄ ՋՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատման նիստի

գ. Ջողաքար «17» օգոստոսի 2021թ.
ժ 13:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Գ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Պ. Մարիբեկյան, Լ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

**ՀՀ ԳՄ ՋՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգ**

1. Մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում:
2. Բանակցությունների արդյունքում և ներկայացված գնային առաջարկի հիման վրա գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

**1. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում մասնակիցների հետ.**

1. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 2021 թվականի օգոստոսի 17-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել էր բոլոր մասնակիցներին՝ 17.08.2021թ.-ին ժամը 13-30-ին գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին մասնակցելու վերաբերյալ:

Գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին ներկայացել էր միայն «Լայն Շին» ՍՊԸ-ն, որը վերանայեց իր կողմից հայտով ներկայացրած գնային առաջարկը /կցվում է/, իսկ «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ն չէր ներկայացել բանակցություններին: Ստորև ներկայացվում է «Լայն Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերջնական /վերանայված/ գնային առաջարկը:

Մասնակիցների գնային առաջարկը՝ ՀՀ դրամով
Ջողաքար համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցման աշխատանքներ

| ՀՀ | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային գինը | Արժեք | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Լայն Շին» ՍՊԸ | 102775000 | 75000000 | 15000000 | 90000000 |
| 2 | «ԲԻԴԵՔ» ՍՊԸ | | 75198745 | 15039749 | 90238494 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**2. Ներկայացրած գնային առաջարկի հիման վրա ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթներով՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- «Լայն Շին» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում.**

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 27.08.2021թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**4.Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում.**

4. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ջոլաքար, 2-րդ փողոց, շենք 17 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ ____________ Գ. Մխիթարյան

Անդամներ՝ ____________ Պ. Սարիբեկյան

____________ Լ. Գրիգորյան

Քարտուղար՝ ____________ Ժ. Խաչատրյան